

սատուն, համբարանոց ցորենի եւ այլ պիտոյքներու. «ամենեքեան լիտեալ քարիւ եւ թրծեալ աղիւսով եւ կրով եւ բոով շինեցան գեղեցիկ եւ վայելուչ յօրինուածով»: Ամէնէն վերջը ձեռք զարկին Եկեղեցւոյն զմբեթի տանիքն նորոգել, որովհետեւ «սալերն քանդեալ եւ ի տեղւոյն ի բաց ոստեալ էին»:

Իսկ Եկեղեցւոյ զարդերէն եւ սպասներէն այն մասերը, որոնք «մահմեդական իշխաններու» քով գրաւ դրուած էին, ետ առնուեցան. այսպէս Արիստակէս հայրապետի Աջը, Աղջոց վանքի Ս. Ստեփանոսի Աջը եւ այլ բազմաթիւ խաչեր, սկիհներ, բուրվառներ եւ շուրջառներ:

Մովսէս արեղայ, «որ երկոցունց հայրապետացս քարտուղար եմ լեալ» կ'ըսէ, այսինքն Մովսէս եւ Փիլիպպոս կաթողիկոսներու, 1641ին խօսելով Մովսէս կաթողիկոսի վերանորոգութեանց մասին՝ կը գրէ. «Սկիզբն արար ի մաքրել զսա յաղբեալից բազմակուտից. լայնանիստ պարսպօք բոլորեաց եւ գերից կողմանց շինուածսն աւարտեաց. որ ինչ միանգամ ըստ հարկաւորութեան եւ ըստ պատշաճաւորութեան պիտոյանայր՝ քարիւ եւ կրով կարծրակառոյց ամբուլթեամբ: Նաեւ զկմբէթ մեծի տաճարիս ի բաց առեալ չքեղացոյց. քանզի էր խարխարեալ եւ կարի նիստ ⁴»:

⁴ Ս. Տէր Աւետիսեան, Ցուց. հայ. Ձեռագրաց Ամենափրկիչ Վանայ Նոր Զուղայի, Թ. 94 (Փիլիսոփայականք): Ասկէ բառացի արտագրած 1653ին Մկրտիչ Լեհացի՝ Ձեռ. էջմ. 1742, էջ 1075: